

18.12. 2001թ.

ժ. 10.30

### Մասնակցում էին՝

Ս. Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Գ. Գևորգյան, Հ. Պետրոսյան, Վ. Դանիելյան, Վ. Դավթյան, Յու. Պողոսյան (*խորհրդի անդամներ*), Ա. Աղազարյան (*խորհրդի քարտուղար*)

### Հրավիրված էին՝

Ն. Մուշեղյան (*Անփոփ վիճակագրության, հրատարակությունների և մարկեթինգի բաժնի պետ*)  
Ա. Սաֆյանը (*Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ*), Ա. Շաբոյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության բաժնի պետ*), Գ. Գյուրջյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ*), Գ. Մարտիրոսյան (*Գնեռի և միջազգային համադրումների բաժնի պետ*), Վ. Դավոյան (*Տեխնոլոգիաների զարգացման բաժնի պետ*)

### Օրակարգի նախագծում՝ վեց հարց.

1. «Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատելու մասին» ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2000թ. օգոստոսի 15-ի թիվ 09 որոշման մեջ (ՀՀ ՎՊԽ 04.01.01թ. թիվ 74 որոշման խմբագրությամբ) փոփոխություն կտարելու մասին.

*/Չեկուցող՝ Վ. Դանիելյան/*

2. Ձև թիվ 1-սպորտ «Ֆիզկուլտուրայի և սպորտային աշխատանքների մասին» վարչական վիճակագրական հաշվետվային ձևին հավանություն տալու մասին.

*/Ներկայացնող՝ Յու. Պողոսյան/*

3. Հաղորդում «2001թ. պետական վիճակագրական աշխատանքների ծրագրով» նախատեսված «Անհատական բնակարանային շինարարություն», «Ամառանոցային տների և ավտոտնակների հաշվառումը», «Երևան քաղաքում և ՀՀ մարզերում անհատ ձեռնարկատերերի կողմից իրականացվող ուղևորափոխադրումները», «Սպառողական ապրանքների շուկաներում (տոնավաճառներում) իրականացվող մանրածախ առևտուրը», «Գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում գյուղատնտեսական ապրանքների և անասունների վաճառքը», «Հանրային սննդի օբյեկտների միջոցով իրականացվող մանրածախ առևտուրը» վիճակագրական հետազոտությունների իրականացման անհնարինության մասին.

*/Ներկայացնող՝ Ն. Մուշեղյան/*

4. Հաղորդում ՀՀ-ում սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար սպառողական զամբյուղի կշիռների մշակման 2001թ. երրորդ եռամսյակի արդյունքների մասին.

*/Ներկայացնող՝ Գ. Մարտիրոսյան/*

5. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

5.1 Հաշվետվություն 2001թ հոկտեմբերի 17-20-ը «Վիճակագրական բազմամյա ինտեգրացված ծրագրեր» թեմայով միջազգային սեմինարին և ԱՊՀ պետություն-մասնակիցների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 22-րդ նստաշրջանին մասնակցության վերաբերյալ.

*/Ներկայացնող՝ Վ. Դանիելյան/*

5.2 Հաշվետվություն 2001թ. նոյեմբերի 18-25-ը Տեղեկատվական տեխնոլոգիաների գծով Շվեդիա կատարած աշխատանքային այցի վերաբերյալ.

*/Ներկայացնող՝ Վ. Դավոյան, Լ. Բաբայան/*

6. Այլ հարցեր

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահ Ս. Մնացականյանի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

*/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

## **Լսեցին՝**

1. «Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատելու մասին» ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2000թ. օգոստոսի 15-ի թիվ 09 որոշման մեջ (ՀՀ ՎՊԽ 04.01.01թ. թիվ 74 որոշման խմբագրությամբ) փոփոխություն կտարելու մասին.

*/Զեկուցող՝ Վ. Դանիելյան/*

Նշվեց, որ չնայած ՀՀ ՎՊԽ 04.10.01թ. թիվ 74 որոշմամբ ՀՀ ԱՎԾ 3՝ Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների, Վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի և Ֆինանսների և դրամաշրջանառության բաժինները միացվել էին Մակրոտնտեսական ցուցանիշների վիճակագրության վարչությունում, այնուամենայնիվ, հաշվի առնելով Վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի բաժնի առանձնահատկությունը, նպատակահարմար է այդ բաժինը առանձնացնել:

**Որոշեցին՝** «Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատելու մասին» ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2000թ. օգոստոսի 15-ի թիվ 09 որոշման 6.7.3 կետում ( ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 04.10.01թ. թիվ 74 որոշման խմբագրությամբ) կատարել հետևյալ փոփոխությունը՝ «2. Մակրոտնտեսական ցուցանիշների վիճակագրության վարչություն»-ից առանձնացնել «Վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի բաժինը»:

Այդ կապակցությամբ 6.7.3 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6.7.3 կառուցվածքը հետևյալն է՝

1. Նախագահի աշխատակազմ
2. Մակրոտնտեսական ցուցանիշների վիճակագրության վարչություն
3. Մարդահամարի վարչություն\*
4. Տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչություն
5. Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժին
6. Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժին
7. Զբաղվածության և աշխատանքի վարձատրության բաժին
8. Մարդահամարի և ժողովրդագրության բաժին
9. Գների և միջազգային համադրումների բաժին
10. Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության բաժին
11. Վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի բաժին
12. Արդյունաբերության բաժին
13. Շինարարության բաժին
14. Գյուղատնտեսության բաժին
15. Տրանսպորտի և կապի ծառայությունների բաժին
16. Առևտրի և այլ ծառայությունների բաժին
17. Պարենային ապահովության տեղեկատվության բաժին
18. Բիզնես ռեգիստրի բաժին
19. Միջազգային վիճակագրական համագործակցության բաժին
20. Ամփոփ վիճակագրության, հրատարակությունների և մարկետինգի բաժին
21. Տպագրա-կազմարարական և պատճենահանման աշխատանքների բաժին
22. Վիճակագրական հաշվետվությունների հաշվառման և վերահսկման բաժին
23. Ֆինանսա-հաշվային բաժին
24. Տնտեսական բաժին
25. Տարածքային ստորաբաժանումների կողմից տեղեկատվության հավաքագրման գործընթացի ֆինանսատնտեսական պլանավորման և կողողինացման բաժին
26. Կադրերի բաժին

- 27. Առաջին բաժին
- 28. Ընդհանուր բաժին

\* ՀՀ 2001 թվականի մարդահամարի աշխատանքներն ավարտելուց հետո ենթակա է լուծարման:»

2. Սահմանել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կենտրոնական ապարատի հետևյալ կառուցվածքը վիճակագրական և վարչատնտեսական գործառնությունների նկարագրերով (կցվում է):

*/Քվեարկության արդյունքները – կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

2. Ձև թիվ 1-սպորտ «Ֆիզկուլտուրայի և սպորտային աշխատանքների մասին» վարչական վիճակագրական հաշվետվային ձևին հավանություն տալու մասին.

*/Ներկայացնող՝ Յու. Պողոսյան/*

Նշվեց, որ ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության կողմից, ՀՀ ՎՊԽ հավանությունը ստանալու ակնկալիքով, Խորհրդի քննարկման է ներկայացվել վերոնշյալ վարչական վիճակագրական հաշվետվային ձևը:

**Որոշեցին՝** հավանություն տալ ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության կողմից հավաքագրվող Ձև թիվ 1-սպորտ «Ֆիզկուլտուրայի և սպորտային աշխատանքների մասին» վարչական վիճակագրական հաշվետվային ձևին:

*/արձանագրային/*

*/Քվեարկության արդյունքները – կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

3. Հաղորդում «2001թ. պետական վիճակագրական աշխատանքների ծրագրով» նախատեսված «Անհատական բնակարանային շինարարություն», «Ամառանոցային տների և ավտոտնակների հաշվառումը», «Երևան քաղաքում և ՀՀ մարզերում անհատ ձեռնարկատերերի կողմից իրականացվող ուղևորափոխադրումները», «Սպառողական ապրանքների շուկաներում (տոնավաճառներում) իրականացվող մանրածախ առևտուրը», «Գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում գյուղատնտեսական ապրանքների և անասունների վաճառքը», «Հանրային սննդի օբյեկտների միջոցով իրականացվող մանրածախ առևտուրը» վիճակագրական հետազոտությունների իրականացման անհնարինության մասին.

*/Ներկայացնող՝ Ն. Մուշեղյան/*

Նշվեց, որ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից այդ հետազոտությունների անցկացումը 2001թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին նպատակահարմար չէր, քանզի, կապված սեզոնայնության և այլ գործոնների հետ, գոյություն ունեն օբյեկտիվ և սուբյեկտիվ խոչընդոտներ, ուստի անհրաժեշտ է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի արձանագրային որոշում դրանց չկատարման փաստն ի գիտություն ընդունելու մասին:

**Որոշեցին՝**

1. ի գիտություն ընդունել «2001թ. պետական վիճակագրական աշխատանքների ծրագրով» նախատեսված «Անհատական բնակարանային շինարարություն», «Երևան քաղաքում և ՀՀ մարզերում անհատ ձեռնարկատերերի կողմից իրականացվող ուղևորափոխադրումները», «Սպառողական ապրանքների շուկաներում (տոնավաճառներում) իրականացվող մանրածախ առևտուրը», «Գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում գյուղատնտեսական ապրանքների և անասունների վաճառքը», «Հանրային սննդի օբյեկտների միջոցով իրականացվող մանրածախ առևտուրը» վիճակագրական հետազոտությունների 2001թ. ընթացքում իրականացման անհնարինությունը:

2. հանձնարարել ՀՀ ԱՎԾ ամփոփ վիճակագրության, հրատարակությունների և մարկետինգի բաժնին (պետ Ն. Մուշեղյան) վերը նշված հետազոտությունների

չիրականացման վերաբերյալ համապատասխան պարզաբանումներ ներառել «2001թ. պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվության մեջ:

*/արձանագրային/*

*/Քվեարկության արդյունքները – կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

4. Հաղորդում ՀՀ-ում սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար սպառողական զամբյուղի կշիռների մշակման 2001թ. երրորդ եռամսյակի արդյունքների մասին.

*/Ներկայացնող՝ Գ. Մարտիրոսյան/*

**Որոշեցին՝** հավանություն տալ ՀՀ-ում սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար սպառողական զամբյուղի կշիռների մշակման մեթոդաբանությանը:

*/արձանագրային/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

5. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

5.1 Հաշվետվություն 2001թ հոկտեմբերի 17-20-ը «Վիճակագրական բազմամյա ինտեգրացված ծրագրեր» թեմայով միջազգային սեմինարին և ԱՊՀ պետություն-մասնակիցների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 22-րդ նստաշրջանին մասնակցության վերաբերյալ.

*/Ներկայացնող՝ Վ. Դանիելյան/*

5.2 Հաշվետվություն 2001թ. նոյեմբերի 18-25-ը Տեղեկատվական տեխնոլոգիաների գծով Շվեդիա կատարած աշխատանքային այցի վերաբերյալ.

*/Ներկայացնող՝ Վ. Դավոյան, Լ. Բարսյան/*

**Որոշեցին՝** բոլոր հաշվետվությունների վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն:

*/արձանագրային/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան